փոխադարձ, երկուստեք որդեգրուին, ելակէտ ընդունելով, ընդհանուրի բարձրագոյն շահերը:

Հայ քաղաքական ղեկավարութիւնը շատ անգամներ փորձել է այդ ուղին, բայց դրեթէ միշտ էլ ապարդիւն: Վրացիք դերադասել են քայլել թաթարների հետ, քան՝ հայերի: Ինչպէս առաջ, այնպէս նաեւ այժմ: Ինչպէս նրանց ազգայնականները, այնպէս եւ ընկերվարականներն ու համայնավարները: Այդ է ասում մեր օրերի պատմութիւնը:

Անշուշտ վրացիների նման քաղաքականութիւնը ունի իր որոշ հիմունքները: Նա բխում է Վրաստանի սեփական շահերի դիտակցութիւնից — սխալ թէ ուղիղ ըմբռնուած՝ տարբեր խնդիր:

Վրաստանի այդօրինակ քաղաքականութեան — որ մի ծայրով ուղղուած է Հայաստանի դէմ — նախադրեալներից մէկն էլ հայ-ադրբէջանեան հակամարտութիւնն է: Վրացիք ելակէտ ունին այն համոզումը եւս, թէ հայերի ու թաթարների յարաբերութիւնները, միեւնոյն է, պատմականօրէն եւ բոլոր պարագաներում անհամերաշխ են: Ուրիշ խօսքով՝ նրանք հայ-թաթարական անհամաձայնութիւնը օգտագործում են սեփական նպատակների համար, այն համոզումով, թէ այդ երկու ազգերը երբեւէ ընդհանուր լեզու գտնելու չեն իրար հետ: Եւ որովհետեւ թոյլ կողմը հայութիւնն է, բնականաբար վրացին իր ձեռքը մեկնում է թաթարին, ամրացնելու համար սեփական դիրքերը: Այդ անում է նա նաեւ նրա համար, որովհետեւ Վրաստանի հանդէպ պահանջատէր է Հայաստան, ինչպէս նաեւ՝ Ադրբէջանի հանդէպ: Վրացական այս քաղաքականութիւնը կարմիր թելի նման անցնում է անդրկովկասեան ժողովուրդների պատմութեան միջով, սկսած 1905-ից մինչեւ օրս,— եթէ աւելի հին շրջանները մի կողմը թողնենք:

Հայ ազգային քաղաքականութիւնը վրացիների ձեռքից խլելու է այդ խաղաքարտը: Թոյլ տալու չէ, որ երրորդ կողմը շահագործէ եւ շարագործէ, ո՛չ միայն մեր թուլութիւնը, այլ եւ՝ մեր համաձայնութիւնը Անդրկովկասի երրորդ ժողովուրդի հետ: Վրացիք խորհել պարտաւոր են, վերջապէս, որ քաղաքականութեան համար քարացած եւ յաւիտենականօրէն նախագծուած ուղիներ չկան, որ՝ առաջին հանդրուանը մի օր էլ երկրորդ դառնալ կարող է, երկրորդը՝ առաջին: Եթէ, օրինակ, հայութիւնը դատելու լինէր վրաց ղեկավարների նման, նա՛ եւս կարող էր նախ եւ առաջ Ադրբէջանի հետ ընդհանուր լեզու գտնելու մասին խորհել, երթալով դիմադրութեան աւելի թոյլ գծով: Չէ՞ որ Հայաստան միայն Ադրբէջանից չէ, որ հողային պահանջներ ունի, այլ եւ՝ Վրաստանից, թէկուզ աւելի պակաս չափերով: Չէ՞ որ մեր մէջ էլ կարող է մի օր այն մտայնութիւնը յաղթող հանդիսանալ, թէ՝ աւելի հեշտ է՝ քիչը վերստանալ, քան շատը, մանաւանդ որ այդ քիչը պակաս դիմադրական ուժ ներկայացնող կողմի ձեռքումն է գտնւում: Ուրիշ խօսքով՝ որդեգրել Վրաստանի վերաբերմամբ այն քաղաքականութիւնը, ինչ որ նա է վաղուց որդեգրել Հայաստանի վերաբերմամբ:

Եւ դա միակ միջոցը չէ: Որչափ եւ թուլացած ու փոքրացած՝ Հայաստան արհամարհելի մեծութիւն չէ յամենայն դէպս, Վրաստանի կամ Ադրբէջանի դիմաց: Մենք արդէն խօսել ենք Անդրկովկասի փոքր ազգութիւնների մասին եւս, որոնք մի խոշոր չափով Վրաստանի սահմաններում են ապրում: Նրանք եւս մի օր քաղաքական ազդակ պիտի դառնան. Անդրկովկասեան ժողովուրդների փոխադարձ յարաբերութեան մշակման խնդրում նրանք եւս մի օր լսելի պիտի դարձնեն իրենց ձայնը: Վրաստանի շահերից չի բխում բնաւ հայկական հողերը, դրանց հետ միասին նաեւ հայկական զգալի փոքրամասնութիւններ իր սահմանների մէջ պահելով, ուժեղացնել աւելի եւս կեդրոնախոյս ուժերը, որ առանց այն էլ շատ են: Եւ սակայն, Վրաստանի հանդէպ ունեցած կամ ունենալիք քաղաքականութիւնից էլ անկախ՝ հայ-ադրբէջանեան կամ հայ-թաթարական յարաբերութեանց շտկումը եւ վերջնական յարդարումը համարելու է առաջնակարգ մտահոգութեան առարկայ:

Երբ ուրեմն մի կողմից յարդարուած կը լինին հայ-վրացական, միւս կողմից էլ հայ ադրբէջանեան յարաբերութիւնները, նրանց բաղաքական միութիւնը եւս, որպէս արդէն